«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 010 301000 2-38, 2-39, sci.council@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, գիտական խորհուրդը լսելով և քննարկելով կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Մինասյանի «Համալսարանական հիվանդանոցների 2025 թվականի գործունեության հաշվետվությունը» թեմայով զեկույցը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներկայացված՝ 2025 թվականի ընթացքում իրականացված ԵՊԲՀ կլինիկական աշխատանքները գնահատել բավարարար (հաշվետվությունը կցվում է) (26-04-05-01).

2.Հավանություն տալ 2026-2027թթ. ընթացքում կլինիկական աշխատանքների ոլորտում իրականացվելիք հետևյալ ծրագրերին՝

1) մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամիսը համալսարանական հիվանդանոցային համալիրներում ավարտին հասցնել ISO 9001:2015 կառավարման որակի չափորոշիչների ներդրման աշխատանքները (26-04-05-02).

2) շարունակել համալսարանական հիվանդանոցային համալիրների թվայնացման գործընթացը՝ այդ թվում թվայնացնելով նաև որակի կառավարման գործընթացը (26-04-05-03).

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

3) շարունակել գիտակլինիկական հետազոտական աշխատանքների միասնական հարթակի կայացման գործընթացը (26-04-05-04).

4) շարունակել նպաստել նոր կլինիկական փորձարկումների ներգրավմանը համալսարանական հիվանդանոցային համալիրներում (26-04-05-05).

5) շարունակել «Կլինիկական տվյալների թվայնացման և հետազոտական հմտությունների զարգացման ինտեգրված ծրագրի» իրականացման գործընթացը (26-04-05-06).

6) շարունակել համալսարանական հիվանդանոցային համալիրների վերազինման աշխատանքները (26-04-05-07).

7) շարունակել համալսարանական հիվանդանոցային համալիրներում կառուցվածքային, կազմակերպական բարեփոխումներին և աշխատողների վարձատրության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված աշխատանքները (26-04-05-08).

3. Մինչև 2026 թվականի ավարտը սկսել նորարարական վիրաբուժության ուսուցման ներդրումը ուսումնական և մեթոդների ներդրումը կլինիկական ոլորտներում, մասնավորապես, պլանավորել ռոբոտիկ վիրաբուժության մեկնարկը «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ում (26-04-05-09).

4. Մշակել համալսարանական հիվանդանոցային համալիրներում ընթացող ուսումնական գործընթացում ուսանողների իրավունքների և պարտականությունների հստակ շրջանակը՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը և միջազգայնորեն ընդունված մոտեցումները (26-04-05-10).

5. Մինչև 2027 թվականի ավարտը համալսարանական հիվանդանոցային համալիրներում ուսանողների և կլինիկական օրդինատորների ուսումնական գործընթացի ներգրավվածությունը հասցնել 51 %-ի (26-04-05-11).

6.Համալսարանական հիվանդանոցային համալիրներում խթանել քիչ ինվազիվ մեթոդների ներդրումը, հընթացս ապահովելով անհրաժեշտ տեխնիկական վերազինում՝ մասնավորապես էնդոսկոպիկ և լապարասկոպիկ վիրաբուժության ոլորտում(26-04-05-12).

7. Համալսարանական հիվանդանոցային համալիրներում իրականացնել բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքներ (26-04-05-13).

8. Հաշվի առնելով Լ.Պիվազյանի կրթաթոշակ սահմանելու առաջարկությամբ հանդես գալու նախաձեռնությունը և ԵՊԲՀ Նոմինացիոն կոմիտեի որոշումը, սահմանել մրցութային կարգով տրամադրվող, անվանի վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Գագիկ Պիվազյանի անվանական կրթաթոշակ՝ վիրաբուժության դպրոցի շրջանավարտ, «Վիրաբուժություն» մասնագիտությամբ կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառողների համար (համապատասխան փաստաթղթերը կցվում են) (25-04-04-14).

9. Հաստատել «Ստոմատոլոգիական միջամտությունները ընդհանուր անզգայացման պայմաններում» մասնագիտությամբ լրացուցիչ մասնագիտացման կրթական ծրագիրը (կցվում է) (26-04-05-15).

10.Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ**